

**ՏԱՍԸ ԿՈՄԱՆԱՑ ՏՕՆԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ ՊԱՅՈՒՆ**

**ՀԱՒԱՏԱՑԵԱԼԸ ՊԵՏՔ Է ՄԻՇՏ ՊԱՏՐԱՍ ԱԼԼԱՅ  
ՀԻՆԳ ԻՄԱՍՏՈՒՆ ԿՈՅՍԵՐՈՒՆ ՊԷՍ**

*ՊԱՏԳԱՄԵՅ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ*

Հայաստանեայց Առաքելական մեր եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն, Ս. Յարութեան տօնը կանխող Աւագ շաբթուան իւրաքանչիւր օրը նուիրուած է Յիսուսի կեանքին կամ պատգամներուն կապուած դրուագի մը: Շաբթուան կարգ մը օրերը, ինչպէս գիտենք, նուիրուած են Վերջին Ընթրիքին, Խաչելութեան, Թաղման ու հրաշափառ Յարութեան, իսկ անկէ առաջ, մեր եկեղեցին կը յիշատակէ Քրիստոսի առակներով փոխանցուած մասնայատուկ պատգամները:

Աւագ Երեքշաբթին նուիրուած է Տասը Կոյսերու առակով փոխանցուած պարգամին: Այս առիթով, մեր Թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ 11 Ապրիլի երեկոյեան յատուկ արարողութիւններ տեղի ունեցան ու մեր հոգեւոր հայրերը վեր առին այդ առակին բովանդակած թելադրանքը:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Փասատինայի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ հանդիսապետեց Տասը Կուսանաց նուիրուած արարողութեան ու ներկայ հաւատացեալներուն բացատրեց առակին խորհուրդը: Արարողութեան ներկայ էին Ազգային Վարչութեան անդամները, ծխական շրջանի ազգային երեսփոխաններ, հոգաբարձութեան անդամներ եւ մեծ թիւով հաւատացեալներ:

Առաջնորդ Սրբազանը յիշեցուց, որ Յիսուս իր պատգամները յաճախ առակներով կը փոխանցէր իր աշակերտներուն ու հետեւորդներուն: Այդ առակներուն շարքին է հինգ իմաստունն ու հինգ անմիտ կոյսերուն մասին այլաբանական պատմութիւնը, ուր կը յիշատակուին հարսանիքին լիովին պատրաստ ներկայացած հինգ հեռատես կոյսերն ու անպատրաստ գացած հինգ միւսները: Այս առակով, շարունակեց Առաջնորդ Սրբազանը, Յիսուս բոլորիս պատգամ կու տայ փեսային գալուստը դիմաւորելու համար միշտ պատրաստ ըլլալու մասին, եւ չնմանելու անհեռատես հինգ կոյսերուն, որոնք իրենց լապտերները քիչ իւղով ներկայացած էին հարսանիքին, ուրեմն, փեսային գալուստէն առաջ, անոնց լապտերները արդէն մարած էին ու անոնք կորսնցուցին հարսանիքին մտնելու առիթը: Այլ խօսքով, քրիստոնեայ հաւատացեալը պիտի ապրի այնպիսի կեանք մը, որ զինք որեւէ պահու պատրաստ պահէ դիմաւորելու փեսային խորհրդանիշով ներկայացող Քրիստոսի ժամանումը, եզրափակեց Առաջնորդ Սրբազանը, մաղթելով ու աղօթելով, որ Տերը իմաստուն կոյսերուն նման արթնութիւն պարգեւէ մեզի, մեր հոգիներուն լապտերները պայծառացնէ, որ հսկենք անոնց վրայ ու չարը խափանուի:

Արարողութեան ավարտին, Առաջնորդ Սրբազանն ու եկեղեցւոյ Հովիւ Արժ. Տ. Խորէն Զիւլ. Պապօշեան, արարողութեան իբրեւ տասը կոյսեր մասնակցած տասը երիտասարդուհիներուն նուիրեցին արծաթեայ խաչեր, իբրեւ գնահատանք՝ եկեղեցւոյ անոնց նուիրումին ու ծառայութեան:

**On Holy Tuesday**

**THE FAITHFUL MUST ALWAYS BE READY  
AS THE FIVE WISE MAIDENS WERE**

***DECLARED THE PRELATE***

According to the calendar of the Armenian Apostolic Church, during the week proceeding Easter, Holy Week, evening services take place every night remembering the last days of Christ's life and messages. Some days of the week are dedicated to the Last Supper, Crucifixion, Burial, and Glorious Resurrection, while others are dedicated to messages He conveyed to the faithful through parables.

On Holy Tuesday, special services took place in all of our churches remembering the parable of the Ten Maidens. His Eminence Archbishop Moushegh Mardirossian, Prelate, presided over services at St. Sarkis Church in Pasadena, where he spoke about the message of the parable of the Ten Maidens. In attendance were Executive Council members, St. Sarkis Church delegates, Board of Trustees, and a large number of parishioners.

The Prelate noted that Jesus often conveyed His message to His disciples and followers through parables, one of which is the parable of the Ten Maidens. On this day, we remember the maidens who were on their way to a wedding. Five of the maidens took extra oil with them for their lamps, while the other five did not. While waiting for the groom, who was delayed, the maidens' lamps burned out. The five who had not taken extra oil with them missed the opportunity to welcome the groom for they had gone to purchase more oil. With this parable, Christ gives us the message that we must always be prepared to welcome the groom as the five wise maidens were, and not to be short sighted like the other five. The Prelate concluded that Christians should live their lives in such a manner that they are prepared at any given time to greet the groom, which symbolizes the second coming of Christ. He also Prayed that the Lord grant us agility and alertness, brighten the lamps of our souls and save us from the evil.

Following the service, the Prelate and Rev. Khoren Babouchian, Pastor, presented silver crosses to the ten young girls, who symbolized the Ten Maidens during the ceremony, as an appreciation for their devotion and service to the church.